

## ՀՄԻՍՏԱՐԻՄ ԸՆԿԵՐՆԵՐ

*Առաջին տեսարան*

—Սյրպէս ուրեմն, դու ամուսնանում ես իմ քրոջ աղջկայ հետ: Հարսանիքիդ օրն արդէն նշանակուած է, բնակարանդ կահաւորւում է և հարսնացուիդ օժիտն արդէն պատրաստ է: Մի երկու շաբաթ ևս, և դու Մարկոսեանի փեսան ես: Հիանալի է, խելացի: Եյ, սպասաւոր, բեր այստեղ մի շիշ շամպայն: Ես այսօր պիտի հարբեմ: Հարկաւոր է հարբել:

Սպասաւորը յայտնուեց, չքացաւ, նորից երևաց մի ձեռում անձեռոցիկի մէջ փաթաթած շիշը, միւսում՝ երկու դատարկ գաւաթներ:

Նրանք նստած էին քաղաքի առաջնակարգ ճաշարանի առանձին սենեակներից մէկում, որ կահաւորուած էր փափուկ թաւշեայ դահաւորակով և բազկաթոռներով: Սպասաւորին խստիւ պատուիրուած էր ոչ ոքի չը թողնել այնտեղ և ամեն անգամ ներս գալիս ու դուրս գնալիս դռները ծածկել:

Երկու նախկին ուսանողական ընկերներ էին և ներկայ բարեկամներ: Երկուսն էլ քաղաքում բաւական յայտնի անհատներ էին — Նառիմեանն իբրև խելօք փաստաբան, Մերսիմեանն իբրև եռանդուն ձեռնարկող և ազգական յայտնի կալուածատէր Մարկոսեանի:

Արտաքինով նրանք հակառիպարներ էին: Նառիմեանը նիհար էր, դէմքի նուրբ և փոքր ինչ կանացի գծերով, բարձր պարանոցով և կանոնաւոր ձևաւորուած գլխով:

Մերսիմեանն ընդհակառակը գէր էր, թուիս դէմքով, կարճ պարանոցով, տափակ ծոծրակով, տափակ ճակատով, փոքրիկ խելացի աչքերով:

— Եւ ի՞նչ ընտրութիւն, — շարունակեց Մերսիմեանը, շեշտելով գաւաթները փրփրուն ըմպելիքով, — ամենափառաւոր: Հասկանալի է, թէ ինչու այնպիսի եռանդով հետամուտ էիր այդ աղջկան: Այո, այդ մի ամբողջ պատմութիւն է: Ես ծանօթացրի քեզ նրա հետ, ես գովեցի և փառաբանեցի քեզ նրա ծնողների մօտ և համոզեցի նրանց ընդունել քո առաջարկը: Մի խօսքով, ես եմ կատարել պատուաւոր միջնորդի պաշտօնը: Քանի՜ քանի՜ երիտասարդներ էին ընկած այդ աղջկայ ետևից: Ի հարկէ, միայն երկու քոյր, հիւանդ հայր, միամիտ մայր և ոչ մի եղբայր: Գիտես որ վաղը միւս օրը նրա հայրը դռները ձգելու է, և դու տիրանալու ես մէկ ու կէս միլլիօնի չափ կարողութեան կիսին, ամենաքիչը կիսին: Սքանչելի է: Կեցցես, բարեկամ, ճարպիկ ես, վկայ է Աստուած, աւելի աջող որս չէիր կարող գտնել: Բայց...

— Բայց դու գիտես, որ ես օրիորդ Մարկոսեանի օժիտով չեմ հրապուրուել, — ընդհատեց Նաուիմեանը իւր բարեկամի խօսքը:

— Օո, ինչպէս չը գիտեմ: Դու սիրահարուած ես աղջկայ վրայ: Քեզ համար ոչինչ արժէք չունին նրա հօր երկու հսկայական տները քաղաքի կենտրոնում, շոգենաւը ծովի երեսին, ամայի նաւթահողերը Սաբունջիում ու Ռօմանիում, գեղեցիկ ձիերը, փայլուն կառքերը, ոսկին, արծաթը, ադամանդները: Դու սիրահարուած ես, խեղճ պատանի: Դու չը գիտես ինչ ասել է հարուստ օժիտ, կամ ճիշտն ասած, արհամարհում ես, հա հա հա: Քո հոգին չի մղում քեզ դէպի շքեղ բալեր, թատրոններ, երեկոյթներ, ճանապարհորդութիւն: Դու սիրահարուած ես ինչպէս տասնուեօթ տարեկան գիմնադիստ, դու պատրաստ ես այսօր և եթ սիրույդ առար-

Պալի հետ հեռանալ աշխարհի բոլոր վայելչութիւններէն և ապրել շինական իգիլիայով: Դու սիրահարուած ես, հա հա հա, դու...

—Մերսիմեան,—ասաց Նառիմեանը, նայելով ընկերոջ աչքերին, որոնց մէջ նկատում էր ինչ-որ լեռնադիտաւորութիւն,—ես քո խօսքերի մէջ զգում եմ ինչ-որ ծաղր: Ի՞նչ են նշանակում ասածներդ:

Համբերիր, և կիմանաս: Եյ, սպասաւոր, բեր այստեղ մի գլուխ անանաս: Եամպայն ենք խմում—կարգին խմենք:

—Դու ասացիր, որ ուզում ես հարբել, ինչո՞ւ:

Օո, այդ շատ կարևոր է, շատ: Դու կարծում ես ես քեզ զո՞ւր եմ բերել այստեղ: Ոչ, գործ ունիմ, շատ կարևոր գործ: Այս ըոպէիս պէտք է վճռենք մի շատ կարևոր խնդիր: Դու զարմանում ես, աչքերդ լառում երեսֆա: Ի՞նչ շատ կը զարմանաս: Եյ, սպասաւոր, դիր այստեղ անանասը, ես ինքս կը կճպեմ ու կը կտրտեմ: Գորի: Այդպէս: Այժմ ոչ ոք չի խանգարի մեզ անկեղծ լինելու... Գոնէ մի օր, մի ժամ, կէս ժամ: Տասներկու տարուայ ընկերներ ու բարեկամներ ենք, սատանան տանի, մթթէ չը պիտի մի անգամ նայենք միմեանց հոգու խորքը: Լսիր, Արշակ, որովհետև խնդիրը շատ կարևոր է, ուրեմն իրաւունք կը տաս ինձ սկսել մի փոքր հեռուից: Զգենք նախ և առաջ մի թեթև հալեացք մեր անցեալի վրայ:

Սրբելով անձեռոցիկով իւր հասալիկ հիւթալի շըրթունքները, Մերսիմեանը արմունգները լենց սեղանի եզրին և շարունակեց: Նա լիջեց ուսանողական օրերը: Յիշեց իննը ուղւաւանց սենեակները և երեսուն կոպէկանոց ճաշերը մայրաքաղաքի էժանագին կերակրատներում, որոնք արնտանեկան սեղանատունն անուան տակ են մտնում որպէս զի աւելի դիւրին խանգարեն չքաւոր ուսանողների ստամոքսը: Յիշեց ընկերական աղմկա-

ի ժողովները, «պահպանողականներին» և «յառաջադէմ-ներին» պայքարը: Նրանք յառաջադէմներէց էին, ուստի և սպառաքի համար կազմում էին որքան կտրելի է անշահ ու փայլուն ծրագիրներ: Նա չը մոռացաւ լիշեւ և երիտասարդ աղախիւնների իրիկնային գաղտնի այցերը, կարանող կանանց չքուոր կացարանները հինգյարկանի տներէ կտուրների տակ և կիսաթառամ տանտիրուհիներէ խանդավառ արցունքները...

—Այո, քաղցը են ուսանողական կեանքի լիշողութիւնները,— գոչեց Նաւիմեանը, որի վրայ նույնպէս ազդեց շամպայնի երրորդ գաւաթը:

—Քննարկ են,— կրկնեց Մերսիմեանը կծու հեգնութեամբ,— ոչ, բարեկամ, դու կեղծում ես: Դու ուղղակի սարսափով ես մտաբերում այն չորս ու կէս տարին, որ անց ես կացրել կէս քաղցած և կէս կուշտ փորով: Ախ, շատ անգամ է մեր ինքնասիրութիւնը խոցոտուել հարուստ ընկերների շրջանում: Մինչդեռ հոգով մղուել ենք հէնց այդ շրջանը: Դու օտանում էիր քո հասարակ պաշտօնեայ հօրից ամսական երեսուն ըուրլի, ես իմ փեսայից նույնչափ: Նա խեղդուում էր և աւելի չէր ուղարկում ինձ, չը նայելով իմ արտասուալի նամակներին: Այն ինչ՝ թէ դու և թէ ես ատում էինք աղքատութիւնը աղքատի բոլոր անգոր ատելութեամբ, հակառակի պէս անչափ սիրելով մայրաքաղաքեան կեանքէ հաճոյքները: Եւ միշտ ստիպուած էինք սանձահարել մեր ախորժակը դառն մտատանջութիւնների և կծու հառաչանքների դնով: Հոգով գեղարուեստների երկրպագու— հազիւ ամիսն երկու անգամ ոտք էինք դնում թատրոնների վերնայարկը, ուսկից բեմն երևում է շախմատի տախտակի, իսկ դերասանները նրա ֆիգուրների չափ: Եւ այդ բարձրութիւնը, ինչո՞ւ թագցնել, մեզ շատ անգամ աւելի է վշտացրել, քան մարդկային հոգու ցածութիւնը...

Որքան ջանք են գործ դրել իրանց մունդիրի կոճակների վրայ ժանգ և կօշիկների վրայ կարկատան չք տեսնելու համար, որքան աշխատել են վերարկուի մաշուած թւերը հարուստներից թագցնելու համար: Եւ, մաքրելով կոճակները, անգիտակցաբար նրանց ժանգը տեղափոխել են իրանց հոգու վրայ, ուր հետզհետէ զօրանում էր մի անտանելի զգացում — աղքատի տանջող նախանձը դէպի հարուստը: Չշմարիտ է, նրանք կարողացել են ուրիշներից թագցնել այդ զգացումը որպէս զի չարժանանան չքաւորների անբարտաւան արհամարհանքին և հարուստների վերաւորական կարեկցութեանը, բայց որպիսի՜ հոգեկան տոււայտանքներով:

— Այդ կողմից դու ինձանից աւելի խելօք և աւելի տակտով էիր, — շարունակեց Մերսիմեանը, բաց թողնելով դանակի ծայրից անանասի շերտը ընկերոջ գաւաթի մէջ: — Խառնիր գալով, և շամպայնը նորից կը փրփրայ: Այո՛, աւելի խելօք և աւելի՛ տակտով: Դու այժմ էլ այդպէս ես: Ինչ եմ ասում, դու ինձ շատ ես լետ թողել քո խելքով: Աա, դու ծիծաղում ես համեստութեամբ: Բայց լսիր, ես ուզում եմ մի թեթև համեմատութիւն անել քո և իմ մէջ: Ուզում եմ, վերջապէս, իմանալ ի՞նչ արտաքին տարբերութիւն կայ երկու համանման գարշելիների մէջ:..

— Գարշելիներ, — արտասանեց Նառիմեանը զարմացած, — այդ քնչ լեզուով ես խօսում:..

— Խնդրեմ, խնդրեմ, մի խանգարիր: Դու գիտես դիւր գալ ամենքին հաւասարապէս, իսկ ես մէկ բարեկամ ձեռք բերելիս — երկուսը կորցնում եմ: Ես կատաղում եմ թշնամուս տեսնելիս, դու ժպտում ես: Ախ, ոչ ոք ընդունակ չէ քեզպէս գրաւիչ ժպտալ նաև վսլելուէ տխրել: Երբ հարկաւոր է — ուրախ սեղանակից ես, երբ անհրաժեշտ է — մտախոհ և մռայլ Համլէտ: Դու նրբակազմ ես, սահուն շարժումներով ու ձևերով,

շուիչ ձայնով, ես կուպիտ եմ, անտաշ և գիւղականի բիրտ ձայնով: Գո գունատ դէմքի արտայայտութիւնը հեզ է, և այդ է, որ քեզ շատերի աչքում դարձրել է հրեշտակ, իսկ ինձ գայլ են համարում, և միանգամայն արդարացի: Դու ոչ ոքի անձնական համոզումը չես վերաւորում կամ նսեմացնում, իսկ ես վերաւորում եմ, և ինձ ատում են: Դու երբէք վիճաբանութեան միջոցին կուպիտ բառեր չես գործածում, իսկ ես գիպչում եմ իմ հակառակորդի անձնաւորութեանը մանաւանդ երբ նրա սեղանին ինձ դիւր չի գալիս: Դու քո հերքումները միշտ ամփոփում ես անուշ հնչող բառերի մէջ և դարձնում նրանց ընդունելի, ես չեմ կարողանում: Ինչո՞ւ թաղցնել, շատ անգամ եմ ուզում, և չեմ կարողանում: Դու, եթէ կամենաս, կարող ես թոյնը թաթիւել մեղրի մէջ և դնել թշնամուղ բերանը, դէմքիդ վրայ խաղացնելով քաղցր ժպիտ, իսկ ես...

— Զեմ հասկանում, այդ ինչ անալիզ է, — ընդհատեց, վերջապէս, Նառիմեանը, որ քանի գնում այնքան աւելի ու աւելի զարմանում էր ընկերոջ տարօրինակ տրամադրութեան վրայ:— Դու ինձ հրաւիրեցիր միասին ճաշելու, ասելով, թէ ինչ-որ շատ կարևոր գործ ունիս, և սկսել ես մի անհասկանալի հեքեաթ: Ինձ թւում է, որ դու արդէն հարբել ես:

— Ահ, կատարելապէս ճիշդ է. ես հարբել եմ, ուրեմն կարող եմ ճշմարտութիւնն ասել առանց քաշուելու: Սպասիր, իսկոյն կը դառնամ գործի էութեանը: Ես շարունակում եմ իմ անալիզը: Դու գիտես հաշտեցնել ծայրերը, միացնել գոյները և ստեղծել ներգաշնակութիւն այնտեղ, ուր շիտակ մարդիկ միայն տգեղութիւն են տեսնում: Ամենակատաղի հակառակորդների մէջ անգամ գտնում ես հայեացքների ընդհանուր կէտ, և այդ կէտի վրայ հարկադրում նրանց իրարու երեսին ժպտալ, իրարու ձեռք սեղմել: Եհ, այժմ ես թողնում

եմ ինձ, իմ ձեռքով գրոշմելով իմ ճակատին գարշելի անուռը, և դառնում եմ միայն քեզ, որովհետև կարելորը դու ես և ոչ ես: Դու հասարակութեան մէջ խօսում ես հանդարտ, անվրդով, ստէպ ստէպ նայելով խելօքների երեսին ականաճու հայեացքով, որ արտայայտում է. «ներեցէք, եթէ ես սխալում եմ»: Եւ ոչ ոք չի ասում, թէ դու սխալում ես, որովհետև երբէք վիճելի ճշմարտութիւններ չես քարոզում: Իւրաքանչիւր ազդեցիկ բառի համար ունիս ձեռների ներդաշնակ շարժում և դէմքի համապատասխան արտայայտութիւն: Բառերը շեշտումես գեղեցիկ, միշտ աչքերիդ մէջ պահելով սովորական հեզութիւնը: Օօ, այդ սոսկալի հեզութիւնը: Այն է քո ամենազօր դէնքը: Այն է, որ քեզ ընդհանուրի աչքում դարձնում է համակրելի: Այո, ամենքը թէ հարուստ և թէ աղքատ, թէ կին և թէ տղամարդ, ընկերներդ, ծանօթներդ, կլիենտներդ քեզ համարում են համակրելի: «Համակրելի Նառիմեանը», «հոգեակ Արշակ Մաթվէլիչը»: Ոմանք քեզ մինչև անգամ «Յիսուսիկ» անունն են տուել, սրբապղծելով մեծագոյն էակի անունը: Չարմանալի ասողի տակ ես ծնուած: Ինքը ճակատագիրն է քեզ որդեգրել, հա հա հա...

—Իէհ, բաւական է, հարկաւոր է վերջ տալ շատ խօսութեանդ,—ասաց Նառիմեանը, մատը սեղմելով էլէքտրական զանգակի կոճակին:

—Սպասիր,—գոչեց Մերսիմեանը, հեռացնելով նրա ձեռը կոճակից,—իսկոյն կը դառնամ էականին: Մինչև այժմ ես եղել եմ քո արժանաւորութիւնների գլխաւոր երկրպագուն, քո մտերիմը, պաշտպանը, հովանաւորը, հաւատարիմ ընկերը: Իսկ այժմ... Այժմ ուզում եմ մի լաւ նայել այդ հեզ աչքերին և տեսնել նրանց խորքում թագնուածը...

Նա աթոռն աւելի մօտեցրեց սեղանին, գլուխն առաջ ձգեց և իսկապէս սկսեց խորը երկարատև հայեաց-

քով նայել ընկերոջ աչքերին: Մի ինչ-որ բոլորովին անտո՛վոր, երկիւղալի նոյն իսկ թշնամական փայլ կար այդ յամառ նայուածքի մէջ: Նառիմեանը փորձեց ժպտալ, չը կարողացաւ, թեթեւակի ցնցուեց և, թիկն տալով աթոռի մէջքին, նայեց առաստաղին:

—Առ, տեսնում եմ, որ դու արդէն կամաց-կամայ հասկանում ես, թէ ինչու համար եմ քեզ այստեղ հրաւիրել, — արտասանեց Մերսիմեանը կծու հեզնութեամբ, որ նոյնպէս տարօրինակ էր Նառիմեանի համար: — Ես խաբուած չեմ եղել, ոչ: Ես միշտ զգացել եմ, որ այդ գեղեցիկ տերևների տակ աղբ է թագնուած: Բայց լռել եմ և շարունակել բարեկամութիւնս: Ինչո՞ւ: Որովհետև որքան ևս դու գարշելի լինէիր, ուրիշներից վատ չէիր այս անիծեալ Սողոմոմ: Դու գոնէ խելք ունէիր, գիտէիր ամենաեղկելի արարքներիդ վայելուչ ձև տալ: Իսկ այժմ... Այժմ տեսնում եմ, որ դու ոչ միայն խելօք ես, այլև խորամանկ... Օ՛հ...

—Մերսիմեան, — գոչեց Նառիմեանն արդէն զայրացած, — չեմ կարծում, որ դինին այդքան ազդած լինի... Դու ուղղակի խելագարուել ես...

—Օ՛հ... ես քեզ թոյլ չեմ տալ բռն դնել այդ միամիտ ընտանիքում: Թոյլ չեմ տալ անբաղդացնել իմ քրոջ աղջկան:

—Ի՞նչ ես ուզում ասել, չեմ հասկանում: Ե՛է, վերջապէս, բացաղբի, ինչո՞ւ համար ես ինչ այդպէս վերաւորում:

Մերսիմեանը ձեռը տարաւ ծոցի գրպանը, հանեց այնտեղից մի ճիւտուած նամակ, բաց արաւ և դրեց ընկերոջ առջև:

—Ահա, կարգա, և կիմանաս:

Նառիմեանը նայեց նամակի վերնագրին, ստորագրին և շրթունքները կրծեց: Մի քանի վայրկեան նա գիտում էր ընկերոջ դէմքը:

— Ճանաչեցիր, այո: Այժմ ասա, քնչ երեսով ես դու ուզում ամուսնանալ իմ քրոջ աղջկայ հետ: Սպասիր, մի շարժուիր տեղիցդ: Դու այս սենեակից դուրս չես գալ մինչև որ խնդիրը չը պարզուի ու վճռուի:

— Ի՞նչպէս է այդ նամակը ձեռքդ ընկել:

— Շատ հասարակ կերպով, փոստն ամենքի տրամադրութեան տակ է: Կարգա, և բոլորը կիմանաս:

Նառիմեանը դողում էր, զուր աշխատելով իշխել իրան: Նա շտապով աչքի անցկացրեց նամակը, որ գրուած էր ծանօթ կանայի ձեռագրով և ծանօթ ուղղագրական սխալներով փոստային թղթի ամբողջ չորս երեսների վրայ:

— Դու գնացել ես նրա մօտ, — հարցրեց նա, նամակը լետ տալով:

— Մթթէ կարող էի չը գնալ այդ տեսակ աղերսալի նամակից լետու: Լօիր, ես կը պատմեմ բոլորը: Ստանալով մէկէլ օրն երեկոյեան այս նամակը, սկզբում ես կարծեցի, ի հարկէ, որ այդ մի շանտաժ է քո դէմ: Մէկն այն սովորական շանտաժներից, որոնց զոհ են դառնում երբեմն տղամարդիկ իրանց հարսանիքի շէմքում: Բայց աղերսանքն այնքան անկեղծ էր հնչում, որ ես վճռեցի գնալ տեսնուել անբաղդի հետ: Երէկ առաւօտեան տասը ժամին ես գտայ նրա կացարանը: Այդ մի համեստ կահաւորուած և մաքուր սենեակ էր մի մեծ տան գաւթի ծայրում: Դռների մէջ ինձ դիմաւորեց մի բաւական բարձրահասակ կին սև հագնուած: Նա լուզուած ձայնով արտասանեց իմ ազգանունը և շտապեց շնորհակալութիւն յայտնել, որ անուշադիր չէի թողել նրա նամակը: Ես նայեցի նրան և իսկոյն զգացի, որ իմ առջև կանգնած է մեր կեղտոտ կրքերի զոհներից մէկը: Բայց ի՞նչ զոհ: Արդարև, քո ճաշակը նուրբ է: Նա գեղեցիկ է, թարմ, և զարմանալի չէ, որ նրա գրկում դու մտնացել ես սովորական զգուշութիւնդ...

Այստեղ Նառիմեանը թեթևակի ցնցուեց, ապա սկսեց սուր հայեացքով նայել ընկերոջ աչքերին:

—Նա խնդրեց ինձ նստել և առանց լուռաշարժանի պատմեց բոլորը, — շարունակեց Մերսիմեանը, չը շփոթուելով նրա հայեացքից: — Նա չէր արտասովում, բայց լուռ մունքից խեղդվում էր: Դողդուղուն ձայնն իւր անկեղծ շեշտով ազդում էր ինձ վրայ հակառակ իմ ջանքի — լինել սառն, ինչպէս վայել է քո հաւատարիմ ընկերոջը: Նա ցոյց տուեց իւր վեցամսեայ երեխային և հարցրեց, արդեօք չեմ տեսնում նմանութիւն նրա և քո դէմքերի մէջ...

—Ես երեխայ չունիմ, իմը չէ, — արտասանեց Նառիմեանը դրականապէս և դարձեալ նայեց ընկերոջ երեսին զննող հայեացքով:

—Մի ստիր, — գրգռուեց Մերսիմեանը, պսպղուն աչքերը լայն բանալով, — նա ունի անհերքելի փաստեր: Դու, ի հարկէ, զգոյշ մարդ ես, չափազանց խոհեմ, բայց на всякого мудреца довольно простоты: Նա ցոյց տուեց ինձ քո նամակը Թիֆլիսից գրուած: Երբ առաջին անգամ իւր կրծքի տակ զգում է անսովոր բարախումը, սարսափում է և շտապում քեզ յայտնել: Այն ժամանակ դու մի ամսով Թիֆլիսումն ես լինում ինչ որ գատատանաչան գործերով: Դու խորհուրդ ես տալիս նրան մանկաբարձուհիների օգնութեանը դիմել խայտառակութեան առաջն առնելու համար: Նա ինչպէս մի անփորձ էակ չի կարողանում գտնել խիղճը վաճառող մանկաբարձուհի և ամաչում է երկար փնտրել: Նա ստիպում է թողնել ծնողների տունը և հեռանալ: Վերադառնալով Թիֆլիսից, դու վարձում ես նրա համար առանձին բնակարան: Քեզանից ոչ ոք հաշիւ չի պահանջում, որովհետև անբաղդի արբշիւ հօրը կաշառում ես փողով և զանազան խոստումներով: Ահա թէ ով ես դու, ես, ամեն

քըս... Անպիտան, ասա ինձ պարզ, քնչ ես մտադիր անել այդ անբաղդի վերաբերմամբ...

— Այն, ինչ որ ընդունուած է անել այդպէսի դէպքերում, — պատասխանեց Նառիմեանը, որ արդէն բաւական իշխել էր իրան և այլ ևս չէր վախենում դիմացինից:

— Այսինքն բաժանուէր:

— Այդ սովորական մի պատմութիւն է:

— Թողնել հարազատ զաւակիդ ճակատադրի հաճութիւն:

— Ես կապահովեմ նրան նիւթապէս:

— Նառիմեան, — մռնչաց Մերսիմեանը, ձեռք դարկելով սեղանին, — պահակել սիրուհուդ կնոջ փողերով — դա անբարոյականութեան վերին աստիճանն է: Ես չեմ թողնի իմ քրոջ աղջկան այդչափ խաբուել:

Եւ չը նայելով իւր խրոխտութեանը նրա ձայնի մէջ զգացուեց անվստահութիւն...

— Ուրեմն քնչ ես պահանջում ինձանից:

— Պահանջում եմ, որ դու այսօր ևեթ հրաժարուիս իմ քրոջ աղջկանից: Նա չի կարող իւր անկողինը բաժանել քո սիրուհու հետ:

— Բայց ես ասացի, որ կը թողնեմ սիրուհուս և արդէն թողել եմ: Նա ինձ խանգարել չի կարող:

— Ոչ, նա կը խանգարի քեզ:

— Նա ինքն ասանց այդ:

— Այո, նա քեզ սիրում է խելագարի պէս, ոչ մի գումար չի կարող ստիպել նրան հաշտուել իւր վշտի հետ: Նա միայն քեզ է ուզում:

— Իսկ եթէ ամուսնանալուց լետոյ անմիջապէս հեռանամ այստեղից:

— Նա կը հեռուի քեզ ուր էլ որ գնաս: Այսպէս է նա որոշել, և ամեն բանից երևում է, որ կը կտտարի որոշումը: Նա անպատճառ վրիժառու կը լինի, ո-

րովհետեւ սէրն ու զաւակը... Այո, այո... Բայց ինչու ես հարցնում, այս բոլորը նա ինքն երէկ երեկոյ ասել է քեզ քո բնականում: Տեսնո՞ւմ ես ինչ մանրամասնութիւններ են յայտնի ինձ: Այսպէս թէ այնպէս, առանց սկանդալի չես ազատուի նրանից: Իսկ ես չեմ ուզում, որ իմ քրոջ աղջկայ անունը կապուի այդ սկանդալի հետ: Ինչ ուզում ես արա սիրուհուդ վերաբերմամբ, բայց հարսնացուիցդ պէտք է հրաժարուիս:

— Իմ հրաժարուիլը հէնց ինքն ըստ ինքեան նրա համար կը դառնայ մի սկանդալ: Ձեմ կարծում, որ քո քրոջ աղջիկը համաձայնուի «մերժուածի» հռչակ ստանալ:

— Այդ մասին կարող ես անհոգ լինել: Դու կը կատարես բոլորը, ինչ-որ կը պահանջեմ քեզնից:

— Այն է,— հարցրեց Նառիմեանը մի ինչոր դիւային շեշտով:

— Առաջինը, կը խոստանաս ինձ ամեն տեղ ասել, թէ հարսնացուդ է քեզ մերժել, հնարելով այնպիսի պատճառներ, որոնք մազի չափ չը դիպչեն նրա պատուին: Դու խորամանկ ես, կարող ես հնարել: Երկրորդ, հէնց այժմ ևեթ կը գրես նրա անունով մի սիրահարական նամակ, ուր կը նկարագրես նրա բոլոր արժանաւորութիւնները: Նամակդ կը վերջացնես աղերսանքով, որ նա չը հրաժարուի կինդ դառնալու: Հասկանո՞ւմ ես: Այդ նամակը կը մնայ իմ ձեռքում իբրև փաստ այն դէպքերի համար, երբ դու մի ուրիշ հարսնացու գրաւելու համար կը փորձես իմ քրոջ աղջկայ վարկը գցել: Այս բոլորն ես մտածել եմ, որոշել և պահանջում եմ, որ կատարես: Եյ, սպասաւոր:

— Ինչ ես կամենում:

— Թուղթ և գրիչ:

— Աւելորդ է: Դու երեխայ չես, թող այդ լիմարութիւնները... Այդ տեսակ տխմար պահանջներ կատարելու համար ես բաւական չափահաս եմ:

Եւ, դառնալով սպասաւորին, որ ներս էր վազել Մերսիմեանի կոչին, հրամայեց.

— Բեր հաշիւը:

— Եւ թուղթ ու թանաք, — աւելացրեց Մերսիմեանը: Սպասաւորն անհետացաւ:

— Բարի բարեկամ, — ասաց Նառիմեանը, — ոչ քեզ ոչ ինձ չի վայելում այդ կօմեղիան: Եթէ դու ընկերես, պէտք է օգնես ինձ այդ ծանր լծից ազատուելու:

— Իմ նպատակն էլ հէնց այդ է: Ահա թուղթ և թանաք, — աւելացրեց Մերսիմեանը, առնելով սպասաւորից և գնելով սեղանի վրայ գրիչը, թուղթն ու թանաքը, — գրիր, ինչ որ ասացի:

— Ուրեմն դու կատակ չես անում:

— Գրիր:

Նառիմեանը ոտքի կանգնեց:

— Ցը տեսութիւն, — ասաց նա, — երբ կարթնանաս գինուց, կը խօսենք:

— Ուրեմն դու ուզում ես, որ ամեն ինչես անեմ:

Շատ բարի. այսօր իսկ Հեղինէն կիմանայ քո գաղտնիքը: Նառիմեանն ընկաւ մտատանջութեան մէջ:

— Բայց գիտե՞ս արդեօք, ինչպէս է վերաբերում ինձ քո քրոջ աղջիկը, — ասաց նա մի ըրպէ անցած, վերեւից ցած մի հեգնական հայեացք ձգելով ընկերոջ անտաշ մարմնի վրայ:

— Նա քեզ համարում է մաքուր և ազնիւ մարդ: Բայց իմ խօսքին նա կը հաւատայ, որովհետեւ ձեռքիս փաստ կայ և որովհետեւ գիտէ, որ շահ չունիմ քեզ զրպարտելու:

— Ես այդ չէի ուզում ասել:

— Ախ, գիտեմ, դու արդէն լաջողել ես գրաւել նրա սիրտը: Խեղճը սիրահարուած է քեզ վրայ: Հարուածը ծանր կը լինի նրա համար. Բայց ոչինչ: Ժամանակը կը բուժի վէրքը: Նա այնքան լիմար չէ, որ չը հաս-

343 / 287 288 289

ՀԱՆԱՏԱՐԻՄ ԸՆԿՆՐՍՆԵՐ  
ԵՐԵՎԱՆ  
1917

ՀԱՆԱՏԱՐԻՄ ԸՆԿՆՐՍՆԵՐ  
ԵՐԵՎԱՆ  
1917

կանայ, թէ չի կարելի սիրել մի մարդու, որ հարազատ զաւակին փողոց է ձգում:

Տիրեց մի քանի վարկեան լուսթիւն: Նառիմեանը ձեռը ճակատին սեղմած, խորհում էր: Մերսիմեանը ցածից վեր նայում էր նրա կանոնաւոր կազմուածքին, գեղեցիկ գլխին և արիստոկրատիկ ձեռներին: Նա միշտ հոգու խորքում նախանձել էր այդ մարդուն, որ այնքան դիւր էր գալիս կանանց:

—Նստիր և գրիր,—կրկնեց նա մի անգամ ևս յամառ կերպով:

—Գիտես ինչ, սիրելիս,—ասաց, վերջապէս, Նառիմեանը, ձեռը լենելով սեղանի եզրին,—ինչպէս տեսնում եմ, քեզ հետ պէտք է այժմ խօսել ուրիշ լեզուով: Լսիր, ես վճռել եմ ամուսնանալ օրիորդ Մարկոսեանի հետ և կամուսնանամ անպատճառ, ինչպէս և իցէ: Ես արդէն այնքան ընտելացել եմ մի միլիոնատիրոջ փեսայ դառնալու մտքի հետ, որ այլ ևս չեմ կարող բաժանուիլ նրանից: Այսօրուանից իմ ապագայ աներն ինձ մտցրել է իւր գործերի մէջ: Աւրեմն, թող յայտնի լինի քեզ, որ այսօրուանից ոչ միայն Մարկոսեանի ընտանիքի անդամն եմ, այլ և լիազօր հաւատարմատարր: Եթէ չես հաւատում, ահաւասիկ կարող ես կարդալ:

Այս ասելով, նա հանեց գրպանից մի մեծ թերթ, բաց արաւ և դրեց ընկերոջ առջև:

—Ի՞նչ ես ուզում ասել գրանով,—հարցրեց Մերսիմեանը, զգալով ընկերոջ ձայնի մէջ սպառնողական շեշտ և, վերջապէս, նշմարելով նրա աչքերի մէջ թագնուած կծու հեգնանքը:

—Այն, որ մենք միմեանց շատ լաւ ենք ճանաչում և խաբել իրարու չենք կարող: Այսօր ես Մարկոսեանի երկաթէ պահարանում գտայ քո ստորագրութեամբ ոչ աւելի ոչ պակաս տասնումէկ մուրհակ: Այդ

մուրհակներից մէկի ժամանակը լրանում է վաղը, միւսինը հինգ օրից յետոյ:

— Գիտեմ, լրանում է, քեզ ինչ,— ընդհատեց անհամբերութեամբ Մերսիմեանը, որի ձայնի մէջ սակայն զգացուեց անհանգստութեան պէս մի բան:

— Ես Մարկոսեանի լիազօրն եմ: Գնա, ինչ ուզում ես ասա իմ հարսնացուին, բայց նրա հօրը չես կարող լարել իմ դէմ: Ուշ է արդէն: Հետևաբար, վաղը տասներկու ժամին ես քեզ կը սպասեմ գրասենեակում: Գուկը բերես այդ հինգ հազար ուրբլին և մուրհակդ յետ կը ստանաս:

— Իսկ եթէ չը բերեմ...

— Մուրհակդ կուղարկուի նոտարին: Զուր ես այդպէս նայում: Եթէ դու կատակ չէիր անում, ես էլ կատակ չեմ անում: Ուրեմն վաղը տասներկու ժամին կը սպասեմ քեզ: Առ այժմ ցը տեսութիւն: Շամպայնի փողը կը վճարեմ... Auf wieder sehen...

Նա քայլերն ուղղեց դէպի գոններն ու դուրս գնաց: Ոտքի թռչելով, Մերսիմեանը մնաց տեղն ու տեղն անշարժ: Հինգ հազար ուրբլի՛: Իսկ նրա գրամարկովում կայ ընդամենը երկու հարիւր ուրբլի... և ոչ ոքից ստանալիք կամ յոյս ստանալու...

### Երկրորդ տեսարան

Երեկոյին Մսերեանը ժողովարան գնաց սովորական ժամանակից երկու ժամ առաջ: Նա ուզում էր հանգիւյել այնտեղ Նառիմեանին:

Այն հանգամանքը, որ Նառիմեանն այժմ Մարկոսեանի լիազօր հաւատարմատարն է, տակն ու վրայ արաւ նրա մտքերը:

Նառիմեանը ժողովարանի ընդարձակ դահլիճումն էր: Նա թուղթ խաղալու սովորութիւն չունէր: Մի խումբ ծանօթների հետ դահլիճի մի անկիւնում խօ-

սակցում էր օրուայ անցքերի մասին: Այս անգամ քընն-  
 ւում էր մի սովորական դէպք: Մի ինչ-որ յայտնի նա-  
 թարդիւնարբեր թոյլ էր տուել իւր հանքերի կառա-  
 վարչին ստորերկրեայ խողովակներով գողանալ ուրիշների  
 հանքերից նաւթ: Գողութիւնը տւել էր չորս ամիս:  
 Այժմ բանտարկուած էին իբրև գողեր միայն մի հասա-  
 րակ գործակատար և մի մշակ, իսկ հանքատէրն իւր  
 կառավարչի հետ ինչոր հրաշքով ազատուել էին կաս-  
 կածներից...

Մերօրինեանը բռնեց Նառիմեանի թևից և տարաւ  
 մի կողմ: Այլ ևս նա այն դատաւորը չէր, որ մի քանի  
 ժամ առաջ սեղմել էր ընկերոջ կողորդը: Նա ժպտում  
 էր: Խղճի գաւազրութիւնն արդէն առաւօտից էր  
 սկսուել...

— Ուրեմն վաղն անպատճառ պիտի վճարեմ մուր-  
 հակովս, — հարցրեց նա:

— Կարծում եմ:

— Ես փող չունիմ: Պէտք է մուրհակը նորոգել:

— Տեսնուել ես փեսայիդ հետ:

— Նրա մօտից եմ գալիս:

— Հրամայեց փոխել:

— Ոչ: Այսօրուանից բոլոր գործերը լանձնել է քեզ  
 և ինքն ալ ևս ոչ մի բանի չի խառնուում: Նա հիւանդ  
 է և ուղարկեց ինձ քեզ մօտ:

— Ցաւում եմ, որ ոչինչ չեմ կարող անել:

— Ուրեմն, ուզում ես ինձ նեղը գցել...

Նառիմեանը, աչքերը լայն բանալով, նայեց ընկե-  
 րոջ երեսին շինծու զարմացմամբ, որ սակայն շատ բնա-  
 կան թոււաց դիմացիներին:

— Այդ դ՞ու ես ասում, բարեկամս: Երկու ժամ սը-  
 րանից առաջ դու չէիր, որ քիչ էր մնում ատրճանակը  
 ճակատիս սեղմէիր: Թոյլ տուր հարցնել, կատարեցի՞ր  
 սպառնալիքդ:

—Կը կատարէի եթէ հեռւանքի մասին տներկբայ լինէի: Բայց բանն այն է, որ հրապուրդ չափազանց դժուար է...

—Չափազանց մինչև անգամ,—կրկնեց Նաուրմեանը ժպտալով,—չը լինի թէ դու փորձել ես այդ բանը:

—Այո: Մի ժամ առաջ ես միւս քրոջս մօտն էի: Այնտեղ հանդիպեցի քո հարսնացուին: Ինչու թագցնեմ, ես նրան մի թեթև քննութեան ենթարկեցի...

—Ե՛ւ...

—Համոզուեցի, որ դու նրան ոչ միայն սերահարեցրել ես քեզ վրայ, այլ և կախարդել, այո, միանգամայն կախարդել: Նա քեզնով է ապրում ու շնչում այժմ, քո մասին է միայն երազում: Նա չի հաւատայ ոչ մի պարսաւանքի...

—Բայց չէ՞ որ դու փաստ ունիս ձեռքումդ... այդ նամակը...

—Նա կարհամարհի ամեն ինչ, այնքան կուրացած է քեզնով:

—Կարող ես ազդել հօր վրայ, եթէ արդէն վճռել ես ինձ կործանել:

—Օո, դու նրան էլ ես խելքից հանել, այդ հիւանդոտ կամակորին: Նա քեզ համարում է ազնուութեան տիպար և հաւատում է այնպէս, ինչպէս երբէք իւր կեանքում մէկին չի հաւատացել:

—Էէ, աշխատիր ուրեմն գործել քրոջդ միջոցով: Նա կազդի իւր ամուսնու և աղջկայ վրայ:

—Քոյրս,—կրկնեց Մերսիմեանը հեզնաբար ժպտալով,—նա վաղուց է կորցրել իւր ազդեցութիւնն ամուսնու վրայ:

Այդ մի դառն խոստովանութիւն էր, որ ակամաք արաւ Մերսիմեանը, թէև դժուար էր անել: Այո, նրա քօյրը վաղուց էր կորցրել ազդեցութիւնն իւր ամուսնու

վրայ, և պատճառը մեծ մասամբ իւր ազգականներն էին, գլխաւորապէս ինքը Մերսիմեանը:

Յանուն ազգակցութեան այդ մարդիկ Մարկոսեանի գրամարկղում գործել էին շատ աւերումներ: Հարստահարելով իւր փեսային, Մերսիմեանը հարազատ քրոջը գրել էր ամենաանհամ դրութեան մէջ: Եւ օր չէր անցնում, որ տիկին Մարկոսեանը իւր հիւանդոտ ու դիւրագրգիւ մարդուց չը լսէր կօպիտ նախատինջներ:

«Եղբայրդ քանդեց ինձ, հարստի առաջին թշնամիներն ազգականներն են»,—կրկնում էր միլլիօնատէրը ստէպ ստէպ: Մերսիմեանը գիտէր այս բանը, գիտէր և այն, որ փեսան աչքով աչք չունի իրան տեսնելու:

—Շատ ցաւում եմ, որ այդպէս է,—ասաց Նառիմեանը, ձեռը ճգնաւորի հեղութեամբ սեղմելով իւր հրրծքին,—շատ ցաւում եմ: Տեսնում ես... ուրեմն դու չը պիտի շատ էլ մեծ յոյս ունենաս քո ազգակցական կապերի վրայ: Երկու ժամ առաջ դու ասպետաբար ինձ դատապարտում էիր, որ սիրուհուս փողոց եմ շարտում: Հա հա հա, ասպետաբար... Ախ, կօմիկ... Ասա խընդրեմ, եթէ ես էլ կամենայի քեզ նման խիստ լեզուով խօսել, ինչ պիտի ասէի այժմ, ահ: Ինքք մտածիր: Չէ որ դու հարազատ քրոջդ վերաբերմամբ ես խիստ վարվում: Սակայն ես սովորութիւն չունիմ իմ ընկերոջ բարոյական արժանաւորութիւնները վերլուծութեան ենթարկելու: Յը տեսութիւն: Ես դեռ այսօրուայ հեռագիրները չեմ կարդացել:

—Արշակ, —գոչեց Մերսիմեանը գունատուած, բըռնելով ընկերոջ թևը:

—Հանդարտ, հանդարտ, սիրելիս,—ասաց Նառիմեանը մեղմիկ,—տեսնողները կը կարծեն, որ մենք վիճում ենք լրջօրէն... Համբերութեամբ և քաղաքավարութեամբ վարուիր:

—Սյդպէս սառը մի խօսիր,—մռնչեց Մերսիմեանը,—ես աւելի եմ վրդովուում:

—Ի՞նչ կարիք կալ, սիրելիս, թակարդ ընկած գայլի պէս մռնչելու: Ե՛է գիտեմ, որ ուժեղ ես ֆիզիկապէս, կարող ես ինձ ծեծել: Բայց կրթուած մարդուն վայել է մոռանալ խոհեմութիւնը, մտնաւանդ հասարակական տեղերում: Կամենում ես ճշմարտութիւնն իմանալ: Ասեմ. Մարկոսեանը քո մուրհակը չի փոխի: Սիրելիս, ինչո՞ւ չը հասկանալ նրա դրութիւնն էլ, մարդու մատեանները քո հաշուում ցոյց են տալիս անվերջ փոխառութիւններ և ոչ մի հատուցում, հասկանում ես, ոչ մի վճարում:

Նառիմեանի ասածների մէջ չը կար ոչ մի սուտ և ոչ մի աւելացում: Ընդհակառակը, նա խօսում էր անհամեմատ մեղմ, քան ունէր իրաւունք խօսելու:

—Լսիր, Արշակ, —ասաց Մերսիմեանը զգալի չափով ընկճուած ձայնով,—գործերս վատ են ընթանում, հասկանում ես, շատ վատ... Այսօր ես տասը մարդու եմ դիմել և ամենքից մերժում ստացել: Ոչ ոք այլ ևս չի վստահանում ինձ ձեռք մեկնել: Ամենքը մատի փաթաթած են դարձրել այս անիծեալ կռիջիսը: Ես փեսայիս մուրհակների մասին չէի մտածում: Նրանք այնքան վտանգաւոր չեն: Վաղը ես ուրիշ վճարելիք ունիմ... Բանկին, հասկանում ես: Մեծ գումար չէ, երկու հազար, բայց այդ էլ չունիմ... Յոյսս էլի փեսայիս վրայ էր: Ես գիտէի, որ նա բացէիբաց պիտի մերժի այս անգամ... Բայց, բայց... Ե՛հ... մտածում էի, թէ կարող եմ մի կերպ գրաւել նրա սիրտը... Յուսահատութիւնն երբեմն մարդուն ստիպում է անխոհեմ միջոցների գիմել... Ե՛հ, ինչ և է, մոռանանք...

Մինչ Մերսիմեանն արտասանում էր իւր վերջին խօսքերը, Նառիմեանը դարձեալ սուր հայեացքով նայում էր նրա աչքերին: Նա արդէն հասկացել էր ընկերոջ միտքը:

—Այդպէս ուրեմն,—արտասանեց փաստաբանը, դարձեալ ժպտալով,— էէ, ես շատ լաւ գիտէի որտեղից է ծագում քո ասպետութիւնը, սիրող քեզի: Դու ուզում էիր դիմել մի ծայրայեղ միջոցի, այսինքն... դաւաճանել ընկերոջդ: Դու ուզում էիր, այսպէս ասած, շահագործել իմ գաղտնիքը: Ով գիտէ, գուցէ կարողանայիր նպատակդ իրագործել: Դուցէ փեսադ երախտասպարա գտնուէր և մի անգամ էլ բանար քո առջև իւր քսակը: Ոչինչ, ոչինչ, բաւական օրիժինայլ միջոց է... Այժմ թող տուր քեզ մի թեթեւ հարց տալ. կէսօրին դու ինչ մի քանի անգամ անուանեցիր օձ, իսկ դ՞ու ինչ ես, ամ, կարելի է իմանալ...

Մերսիմեանը երեսը շփոթուած դարձրեց մի կողմէ՝ Նառիմեանը, թեթեւ ծիծաղելով, ձեռը դրեց նրա ուսերի վրայ և, նայելով երեսին, աւելացրեց.

—Աղուէս գայլի մորթով... Տը տեսութիւն: Ես գնում եմ ընթերցարան: Դէ լաւ, գուր մի պղտորիբ արիւնդ, դատարկ բան է: Ես չեմ վերաւորում...

Նա հանդարտ հեռացաւ Մերսիմեանից, ճանապարհին աջ ու ձախ բարևելով ծանօթներին սովորական սիրալիր ժպիտն երեսին:

Մերսիմեանը նայեց նրա ետևից մի քանի վայրկեան տակաւին շփոթուած: Ապա, ուշքը ժողովելով, նստեց մերձակալ բազկաթոռներից մէկի վրայ:

Նա տուել էր մի հարուած—փոխարէնը ստացաւ երկուսը: Նառիմեանը նրա դիմակը պատուեց աւելի ճարպիկ, քան ինքը—նրանը: Նախ նա մերկացրեց նրա աչքակցակսն պատուասիրութեան իսկական հիմքը, ապա ընկերական հաւատարմութեան կեղծիքը:

«Ո՛վ է մեզանից աւելի ստորը», հարցրեց նա ինքն իրան և չը կարողացաւ որոշել:

Նա ձեռով մի յուսահատական շարժում արաւ և ոտքի կանգնեց: Ի՞նչ պիտի անի այժմ: Կատարի՞, ար-

դեօք, իւր սպառնալիքը: Նա ինքն իւր ղէնքը տուեց Նառիմեանին: Այսուհետեւ այլ ևս դժուար է համոզել նրան, թէ իրաւ ինքը հոգում է իւր քեռորդու մասին:

Նա անցաւ ընթերցարան:

Նառիմեանը, երկայն սեղանի քով նստած, ոտ ոտի վրայ ձգած, հանգիստ, հեռագրներ էր կարդում:

Զգալով ընկերոջ ներկայութիւնը իւր ետևում, նայեց ցածից վեր և ամեն բան հասկացաւ: Այլ ևս Մերսիմեանը նրա աչքերի մէջ չը տեսաւ կծու հեղանանք, որ այնպիսի դաժանութիւն էր տուել այդ ժըպտուն ղէմքին: Եւ ինչո՞ւ պիտի լինէր: Մերսիմեանը ընկած էր, իսկ Նառիմեանը ընկածին հարուածելը սովորաբար աւելորդ էր համարում:

— Քաղաքական աշխարհում և ոչ մի հետաքրքրական երևոյթ, — ասաց նա, հեռագրները ձգելով սեղանի վրայ և վերկացաւ տեղից:

Նրանք միասին դուրս եկան նախասենեակ:

Մերսիմեանը հանեց ծոցից նամակը և տուեց Նառիմեանին:

— Ինչքո՞ւ է հարկաւոր այդ կնոջ նամակը, — ասաց Նառիմեանը հանգիստ:

Մերսիմեանը ապշած նայեց նրան:

— Ես այսօր մեր փոթորկալի ճաշից լետոյ, — բացատրեց Նառիմեանը, — գնացի նրա մօտ: Էհ, բարեկամս, երբէք չը պիտի քրքրել ուրիշի բարոյական տիղմը առանց սեպհականի մասին մի լաւ մտածելու: Բայց ես քեզ չեմ մեղադրում, ոչ էլ այդ կնոջը...

— Ի՞նչ ես ուզում ասել, — հարցրեց Մերսիմեանը, նախազուշակելով սակայն, որ ընկերն իւր ամենազօրեղ հարուածը թողել էր վերջի համար:

— Ոչինչ: Այդ կինն երբէք ինձ չի սիրել: Նա քեզ ճանաչում էր հեռուից և միշտ հաճոյքով խօսում քո մասին: Նա միայն առիթ է փնտրել քեզ հետ ծանօ-

Թանալու: Դէ՛հ դէ՛հ, չարժէ շփոթուել ու կարմրել: Բարոյականութիւն ասուած բանը շատ առաձգական հասկացողութիւն է: Նա իսկապէս ձև է և ոչ նիւթ: Իսկ ձևերը տարբեր են լինում: Հասարակութիւնն աչքերով է մտածում: Նրա համար բարոյական է ամեն ինչ, որ վայելուչ է արտաքուստ: Բաւական է, որ նրա հայեացքը չը վերաւորես, չի աշխատիլ թափանցել ներքինդ: Բայց եթէ վերարկուիդ օձիքը հին է, նա կը կարծի, որ ներքնահագուստդ կեղտոտ է: Ամեն բան ձևի վրայ է հիմնուած...

— Ես ոչինչ չեմ հասկանում, — փորձեց Մերսիմեանը հերքել ընկերոջ ակնարկները, թէև շատ լաւ հասկանում էր նրա միտքը:

— Բաւական է: Մենք գիմնադիստներ չենք, և ես ոչ քեզ, ոչ մանաւանդ նրան չեմ մեղադրում: Մտածենք նախ գործի մասին, յետոյ կը խօսենք և դրա մասին: Ասա այժմ ինչ ես կամենում ինչանից:

— Արշակ...

— Դէ լաւ, հերիք է... Չէ որ մէջտեղ մուրհակների խնդիր կայ: Կամենաս, գնանք փեսայիդ մօտ: Գուցէ ինձ յաջողուի մի բան անել քեզ համար: Գնում ենք թէ չէ: Յետոյ ուշ կը լինի...

— Գնանք, — ասաց Մերսիմեանը, չը կարողանալով թազցնել իւր ուրախութիւնը:

— Այսպէս, ուրեմն, ծառայութեան փոխարէն ծառայութիւն, չէ, հաճելի ծառայութիւն...

Նրանք իջան ընդարձակ օանդիստով, հագստն վերարկուները և դուրս եկան փողոց:

Մարկոսեանի բնակարանը հեռու չէր:

Անցնելով ընդամենը երկու փողոց, ընկերները բարձրացան երկարկանի մի տան երրորդ յարկը:

Կեղտոտ հագնուած զարաբաղցի սպասաւորը կեղ-

տոտ ձեռներով քաշեց նրանց ուսերից վերարկուները, բարեկամական եղանակով ասելով.

— Լօխ էլ տանն են:

Այժմեան միլիօնատէրը երեսուն տարի առաջ գործակատար էր մի թուրք նաւատիրոջ մօտ: Շատ բաներ էին պատմում նրա մասին: Իբր թէ նախ նա կողոպտել է թուրքին, ապա մի հայ բրնձավաճառի, լետոյ մի ինչ-որ լեհացու: Բայց ասում էին միայն այն մարդիկ, որոնք հոգով փափագել էին Մարկոսեանի նման լինել և չէին կարողացել: Իսկ ընդհանրապէս նրա անցեալը տրուել էր մոռացութեան:

Այսպէս թէ այնպէս, այժմ Մարկոսեանը քաղաքում համարուում էր առաջնակարգ հարուստներից մէկը և վախելում էր շատ շատերի լարգանքը:

Ընտանիքը սեղանատանն էր:

Ընկերներն անցան շուալ կահաւորուած և էլէքտրական ճրագներով լուսաւորուած հիւրասենեակը և մասն մի ընդարձակ սենեակ:

Այստեղ արծաթեայ սամովարի շուրջը ժողովուած թէյ էին խմում Աղաջան Մարկոսեանը, տիկին Նազլուն, օրիորդ Հեղինէն և նրա քոյր օրիորդ Մանիկը:

— Պըյ, ինչ լաւ հիւրեր եկան, — գոչեց տիկին Նազլուն իւր ծննդավայրի առողջանութեամբ, որ միանգամայն հակասում էր նրա եւրոպական պէրանքին:

Արտաքինի վերաբերմամբ այդ մի տարօրինակ զոյգ էր, որ քաղաքում դարձել էր անգործ մարդկանց սրախօսութիւնների նաև բամբասանքների առարկայ: Մարդը փոքրամարմին էր, նիհար, փոքրիկ երեսով և կարճ ու հաստիկ բեղերով, մի խօսքով, հայ գիւղականի տափակ տիպարներից մէկը: Տասը տարի էր արդէն ստամոքսի կատաղից և ոսկրացաւից կուչ էր եկել, կըծկուել և դէմքի թառամ ու կանանչած գունով լիջեցնում էր կճեպած ու արևի տակ չօրացրած բազրջան:

Գինն ընդհակառակը պարթևահասակ էր, գեղեցիկ դէմքով, կարմիր այտերով, թէև կոշտ, բայց կանոնաւոր կազմուածքով, առողջ և տակաւին թարմ ինչպէս նորահարս:

Նառիմեանը համբուրեց նրա բազմաթիւ մատանիներով զարդարուած սպիտակ ձեռք, նստեց հարսնացուի քով ժպիտն երեսին և սկսեց զուարճախօսել: Հեղինէի դէմքը պայծառացել էր նրան տեսնելու ըուզէից: Նա սիրահարուել էր իւր փեսացուի վրայ հենց առաջին ծանօթութեան պահից: Հասակով միայն իւր մօրը նման, նա իսկապէս հօր հարազատ պատճէնն էր: Նիհար էր, թուխ դէմքով, ներս ընկած կրծքով և քթի արմատում միացած ունքերով:

Մի անգամ մի ոմն անքաղաքավարի պարոն հարցրեց Նառիմեանին, արդեօք, այդ աղջկայ ինչն է՞ հաւանում:

— Գեղեցիկ աչքերը և փղոսկրի պէս մաքուր ու փայլուն ատամները, — պատասխանեց փաստաբանը հանգիստ, թէև զգում էր, որ դիմացինը ծաղրում է իւր ճաշակը:

— Եհ, ինչ նոր խաբար կայ աշխարհում, — հարցրեց Աղաջանը Ղարաբաղի բարբառով, որ նրա բերանում մնացել էր անխախտ, չը նայելով, որ մանուկ հասակում էր հեռացել ծծղավայրից:

Նառիմեանը յարգանքով և պատկառանքով լի ժպիտն երեսին հաղորդեց օրուայ ամենահետաքրքրական լուրը — նաւթի գողութեան մասին:

— Ելի՛, — գոչեց Աղաջանը քսու ու խուլ ձայնով, որ, կարծես, կարասի յատակից էր հնչում, — մինչև երբ:

Լուրն իսկապէս նրան պատճառեց մեծ հաճոյք: Մարդկանց, մանաւանդ իւր շրջանի մարդկանց առաւելապէս իւր ծանօթների ստորութիւններն առ հասարակ նրան ուրախացնում էին:

—Ասա մին տեսնենք, ինչպէս է պատահել, —ասաց նա, կարճելի հաստ բեխերը բերանից հեռացնելով և կուրծքը դէմ տալով սեղանի եզրին:

Նառիմեանը պատմեց մանրամասները: Երբ հաղորդեց, թէ հանքատէրն այսինքն իսկական գողը չի բանտարկուել, Աղաջանը հիասթափուեց:

—Ափսոս, ափսոս, — գոչեց նա, — այդ մէկը քէֆիս չեկաւ: Այ թամաշան այն ժամանակը կը լինէր, որ նրան էլ ծակուռը կոխէին, թէ չէ, — պռիկաշչիկը կամ մշակը ինչ... Կը կոխեն ծակուռը նրան էլ թէ չէ, — հարցրեց նա հետաքրքրութիւնից շունչը կարած:

Նառիմեանը, ուսերը տարակուսանքով վեր բարձրացնելով, խորհրդաւոր ժպտաց:

—Հասկացա՛յ, հասկացա՛յ, — արտասանեց Աղաջանը տեղական բարք ու վարքերը լաւ ուսումնասիրած մարգու եղանակով, — հարկս հարկաց, պատիւս արժանաւորաց: Եթէ պատուիրանքը կատարած կը լինի, — աւելացրեց նա ծիծաղելով, — մենք էլ ճանաչում ենք մեր պրիստապններին ու քննիչներին: Ամա ինչ յետ եկածներն են մերոնք. իրանք գողանում են, ծախում, փողերը գրպանները դնում, յետոյ պռիկաշչիկին կամ մշակներին բերան են տալիս:

Ապա Աղաջանը սկսեց պախարակել «գողերին», որոնք բազուցիների անունը ամբողջ աշխարհում խախտառակում են և համոզմունքով պնդեց, թէ հանքատէրերի մէջ ոչ մի ազնիւ մարդ չը կայ: Նա ինքն իրան հանքատէր չէր համարում, որովհետև նրա հարուստ նաւթահողերը տրուած էին կապալով ուրիշներին:

Մի անգամ ևս Մերսիմեանը մտածեց Հեղինէի ապագայի մասին: Միամիտ օրիորդ, որպիսի սիրով, հաւատով է լաւել երջանկութեամբ լի աչքերը իւր փեսացուի երեսին, ինչպէս է աշխատում կարելոյն չափ մերձենալ նրան, սեղմուել, չը նայելով մօր յանդիմանա-

կան հայեացքներին: Պարզ է, որ նա արդէն անդառնալի ձուլուել ու միացել է հոգով ու սրտով Նառիմեանի հետ, և բաժանել նրանց—կը նշանակէ խորտակել խեղճի բաղբը:

Եղաւ մի վայրկեան, որ Մերսիմեանը մոռացաւ իր հաշիւները, կամեցաւ պատուել ընկերոջ դիմակը և ցոյց տալ Հեղինէին, թէ ում է յանձնում իւր բաղբը: Այդ վայրկեանին նա մինչև անգամ ձեռք տարաւ ծոցի դրուպանը և շօշափեց Նառիմեանի սիրուհու նամակը: Բայց նայեց ընկերոջ երեսին և սթափուեց: Արդէն խղճի հետ պայմաններ կապելու սովորութիւնը վաղուց էր նրա մէջ արիւն ու մարմին դարձել: Ե՛հ, միևնոյն է, Հեղինէն չի հաւատայ և եթէ հաւատայ էլ, կրնորի: Չէ՛ որ նա կին է: Կըների նոյն իսկ նրա մայրը գուցէ և հայրը: Քիչ են եղել դէպքեր, որ նահապետական համարուած մայրը իւր աղջկայ թեւը բռնած մտցրել է փեսացուի ննջարանը, ուր դեռ սիրուհու անուշահոտ իւղերի բոլորը չի չքացել: Միթէ հազուադիւտ չէ՞ այժմ այն տղամարդը, որ սիրուհուն թողնէր աւելի առաջ քան ամուսնութեան նախընթաց օրը:

Իստարկ, լիմար մտքեր: Պէտք է մուրհակներէ մասին մտածել: Վերջապէս, կայ և մի ուրիշ ոչ պակաս զօրաւոր պատճառ լռելու: Նառիմեանի սիրուհին շատ հրապուրիչ է... Նառիմեանը նրան թողնում է և չի կարող չը թողնել: Այդ կինը Նառիմեանին չի սիրում և իսկապէս երբէք չի սիրել: Այս բանը շատ լաւ դիմէ Մերսիմեանը: Ինչ փոյթ, որ նա կէսօրին հակառակն էր ասում ընկերոջը: Այդ մի մանծովը էր, որ չը յաջողուեց: Նառիմեանը բռնեց նրա կեղծիքը, սեղմեց պատին: Ոչ, ոչ, այդ մարդու հետ խորամանկութեամբ կամ խելքով մրցել դժուար է: Պէտք է ընկերաբար վարուել, ինչպէս վարուել է մինչև այժմ...

Երեխան: Այդ արդէն Նառիմեանի գործն է: Նա

խելօք է և ոչ այնքան էլ անսիրտ: Նա կը մտածի իւր-  
զաւակի մտսին: Փող կայ, և նրանով կարելի է առնել  
բոլոր դժուարութիւններէ առաջը: Իսկ երբ երեխայի  
հարցը վճռուի—մայրը...

Եւ իսկապէս նա շատ գեղեցիկ է... Այսօր Մեր-  
սիմեանը նրա մօտից դուրս գալիս զգաց, որ չի կարող  
աւելի սիրունը գտնել աւելի ապահով անկիւնում: Զգաց  
նաև, որ այդ գեղեցկուհու աչքերը նայեցին իրան աւե-  
լի քան երախտագիտութեամբ: Օօ, կանայք, կանայք,  
բաւական է մի անգամ սայթաքուէք և արդէն գլխի-  
վայր գլորվում էք անդունդը: Այսօր մէկը, վաղը նրա  
ընկերը...

Նազլուն խօսք բաց արաւ հարսանիքի մասին:  
Բանն այն է, որ մի կարևոր խնդիր դեռ վճռուած չէր:  
Նազլուն ուզում էր երկու տեսակի խրախճան տալ—  
մէկը ասիական երաժշտութեամբ Աղաջանի ազգական-  
ների և «ասիացի» բարեկամների, միւսը եւրոպական ե-  
րաժշտութեամբ «բարձր» դասի համար: Նա արհամար-  
հում էր իւր շինական ամուսնու ազգակցական կապերը:  
Լինելով ինչ-որ մասնաւոր փաստաբանի աշջիկ, համո-  
զուած էր, թէ մեծ բարիք է արել Մարկոսեանին, որ  
ամուսնացել է նրա հարստութեան հետ: Այս էր պատ-  
ճառը, որ ամուսնու անվերջ նախատինքները նրա վրայ  
ոչինչ ներգործութիւն չէին ունեցել: Նա արհամար-  
հում էր այդ նախատինքները իբրև շինականի գուեհ-  
կութեան բնական հետևանքներ: Նա միշտ կովում էր  
ամուսնու հետ իրանց կենցաղավարութեան մասին և  
միշտ յաղթող էր հանդիսանում:

Այս անգամ Աղաջանը յամառութեամբ պնդում էր,  
թէ պէտք է ամենքին անխտիր հրաւիրել մի երեկոյ և  
բոլորովին նստեցնել միասին:

—Ես արխտօկրատ չեմ,—ասում էր նա,— մի-

գեղական մարդ եմ, տրեխներս չեմ կարող մոռանալ:

— Զի լինի, ա մարդ, չի լինի, — գոչեց Նազլուն, — ես չեմ կարող Վանէսանց Զառնիշանին Մելիքովի հարսի հետ կամ Գիւքունց Բաղդասարին Աղազադուիների հետ նստեցնել: Զի սազի...

— Կը սազի, այնպէս կը սազի, որ քէֆդ գայ: Այ ասեմ ինչպէս արա: Քո ազգականներին նստեցրու իմ ազգականների ու աղազադէների հետ մէջամէջ: Եթէ մերոնք էշեր են, ձերոնք ոչ էշեր են, ոչ էլ քեօհլան ձիեր, զաթիրներ են, կարող են մէկզմէկու կապել ցեմենտի պէս:

Նա ուզում էր խկապէս խալթել իւր աներձագին, որի առողջ և կայտառ դէմքն այսօր առանձնապէս գըրգռում էր նրա նախանձը:

Մերսիմեանը հասկացաւ և լռեց:

— Ներողութիւն, իմ ազգականներն ամենքն էլ արիստօկրատներ են, — ասաց Նազլուն, ամօթից կարմրելով:

— Ինչպէս չէ, մի արիստօկրատ էլ այլ այլ պարոնն է, — ասաց Աղաջանը կծու հեգնութեամբ, գլխով նշան անելով դէպի Մերսիմեանի կողմը: — Ելի որ քամին է հրամանոցդ բերել այստեղ, — դարձաւ նա ինժեներին, որի այցելութեան նպատակն արդէն գուշակել էր փողաւորի հոտաւութեամբ:

Մերսիմեանը ոչինչ չասաց:

Նազլուն դիմեց Նաուիմեանի միջնորդութեանը, խընդրելով, որ նա համոզի Աղաջանին իւր կամքը կատարելու:

— Դէ լաւ, զահլա մի տանիր, — գոչեց անհամբեր Աղաջանը գրգռուած, — ինչ ուզում էք արէք, ես գլուխ չունիմ...

Նա ոտքի կանգնեց, թողնելով թէլի բաժակը կիսատ, և կաղէկաղ մրմրթալով դուրս գնաց:

Մերսիմեանը մի լուսահատ հայեացք ձգեց ընկերոջ վրայ:

Նառիմեանը վերկացաւ և հետևեց Աղաջանին:

Նազլուն սկսեց գանգատուել եղբօրը ամուսնու վրայ: Վերջին ժամանակ այդ մարդը միանգամայն անտանելի է դարձել: Գրգռվում է ամենաչնչին բաներից և ուղղակի թունաւորում ընտանիքի կեանքը:

— Ինչ տեսնողը կասի թէ բաղդաւոր եմ, բայց օրս օր չէ, Լևոն, օր չէ, երեսիս կարմրութեանը մի նալիր: Այդ ի՞նչ խայտառակութիւն էր փեսացուիս մօտ, ի՞նչ խայտառակութիւն:

Եւ նա սկսեց լաց լինել, — մի բան, որ շատ հազիւ էր պատահում:

— МНѢ СТЫДНО, — գօչեց Հեղինէն և արտասուելով գուրս վազեց:

— МНѢ ТОЖЕ, — ասաց Մանիկն և հետևեց քրոջը:

— Դու քո Աստուածը, այսօր ոչինչ չը խնդրես նըրանից: Երեսիս մեռունը թափուեց, վերջացաւ: Շարունակ քեզ վրայ է գանգատվում:

Ներս մտաւ սպասաւորը և Մերսիմեանին հրաւիրեց առանձնասենեակ:

Աղաջանն անմիջապէս յարձակուեց նրա վրայ, ժամանակ չը տալով անգամ նստելու: Արդէն նա չափից գուրս էր գայրացած:

— Ելի ուղղութիւն, էլի: Աղբէր, մինչև երբ, հերիք չէ: Քանդեցիք տունս, գնաց, էլ ձեռք չէք վերցնելո՞ւ: Ի՞նչ էք սոված գալլերի պէս վրէս ընկել, պըլ պըլ պըլ: Քառասուն ու հինգ հազարի հաշիւ կայ ստիդ, հերիք չէ: Ախար, ասա տեսնեմ, որ մեծ մեծ բաներ ես բռնում, հողեր ես առնում, հորեր ես քանդում, կանտօր ու բուխալտեր ես պահում, ո՞վ ես, ո՞ւմ տղան ես: Մանթաջօվի, թէ Թաղիեվի: Կամ ես Ռօզլիլդ եմ, թէ անգլիչանների խաղնան ունիմ: Աղբէր,

խռուած եմ, էէ, խռուած, Աստուած, երկինք, հոգիս, հաւատս վկայ, չիւրու բողազս խռուած եմ պարտքերի մէջ, պլլ պլլ, պլլ պլլ...

Նա կանգ առաւ, շունչ քաշեց, ապա շարունակեց.  
— Էէ, լաւ, ասնք փեսուդ եմ, ասա տեսնեմ, քոյրդ է կնիկս, թէ դու։ Ուզում ես քեզ մի կտոր հաց տամ, պահեմ։ Աչքիս վրայ, ամեն օր եկ, Աստու տուածից կեր, գնա. հալալ լինի քեզ էլ ու մօրդ ճնկլճտերին էլ։ Ել դիշբերահիս որն է։ Լեանգդի ես, թէ դաչմդ։ Դէ որ դաչող ես, մի դանակ վերցրու, մի անգամ մորթիր, ազատիր էլի... էլ ինչո՞ւ ես չարչարում, պլլ պլլ, պլլ պլլ...

Նա սկսեց սաստիկ հազալ, որ սովորաբար առաջանում էր շափազանց գրգռուելուց։ Կծկուեց, կուչ եկաւ և գրեթէ աներևութացաւ սեղանի ետևում։

Մերսիմեանը կամեցաւ պաշտպանուել։ Բայց զգաց, որ դրանով կարող է գործն աւելի փչացնել։ Արդարև, Աղաջանը հէնց մի հակաճառութեան էր սպասում, որպէսզի աւելի սաստկացնի իւր նախատինքները։

Նառիմեանը լուռ նալում էր սեղանի մի կէտին դէմքի վրայ յարգանքի և հեզութեան ժպիտ, սրտի խորքում ծաղրի և արհամարհանքի զգացում դէպի իւր ապագայ աները։

Աղաջանն իւր վերջին թուքը ձգեց Մերսիմեանի կողմը, չը խնայելով յատակին սփռած թանգազին պարսկական գորգը, և բերանը սրբելով, գլուխը բարձրացրեց սեղանի ետևից, որչից դուրս սողացող փորսողի պէս։

— Լաւ, — շարունակեց նա, աւելի գրգռուած, — իմացանք որ ուսում ունիս, գիտնական ես, հանցու ինչ, հէնց պիտի մեզ քերթես էլի։ Ես որ գեղական տեղովս իմ հալալ արիւն-քրտինքովս մի կտոր հաց եմ աշխատել, առողջութիւնս կորցնելով, դու այդ ուսումնական տեղովդ չես կարող։ Հէնց հազիր-հազիրդան եփած տօլ-

մա պիտի լինի, որ ուտէք ու այդպէս չաղանաք, կարմրէք ու փքուէք: Աղբէր, ձեր ինժեներներն թնջ ցառու կրակ դարձան մեր գլխին: Կամ ձեր այդ դիպլոմատներն թնջ են անուամ: Կայիս են թէ չէ, ուզում են մինրաջ միլիոնի դառնալ, այն էլ ուրիշների փողով:

— Արշակ ջան, — դարձաւ զբզռուած մելլիօնատէրը իւր փեսացուին, որի ներկայութիւնը մի վայրկեան մոռացել էր, — քէֆիդ թող չը դիպչի, տեղն եկաւ, ասացի: Ախար թնջպէս չասեմ: Իէ որ ուսումնականն էլ վերջը պիտի վաճառական դառնալ, էլ ինչո՞ւ են գնում, ուսում առնում, էն է բաղկալի դուքան բաց անեն ու նստեն էլի: Ել ինչո՞ւ գնացիր, — դարձաւ նա կրկին Մերսիմեանին, — մին բեօլուք փողերս փչացրիր, եկար: Այդ գնակի համար: Որ ես կրծքիս զնակ չունիմ, քեզանից պակաս զավօդչիկ եմ: Խելքս բան չի կորո՞ւմ: Մախլաս: Ինչ ուզում ես ասա, ուրիշի փողը հալալ չէ, հալալ չէ, հալալ չէ...

Վերջին բառերն արտասանելիս նրա ձայնի մէջ զգացուեց ինչ-որ խորը թագցրած վիշտ: Ով գիտէ, գուցէ երկար տարիների ընթացքում լուրթեան մատնուած խիղճը սկսել էր խօսել նրա սրտում:

Նաւիմեանն ու Մերսիմեանը նայում էին միմեանց երեսին, չը կարողանալով սակայն ուղիղ նայել այն մարդու երեսին, որ ինքը քաջութիւն չունէր շատերի աչքին ուղիղ նայելու: Այդ կոպիտ շինականը, այդ նախկին գործակատարը, որ ինքն էլ զգում էր, թէ ուրիշների արիւն-քրտինքով է դիրք ու հարստութիւն ստեղծել, կարողանում էր նրանց նախատել համարձակ: Եւ նրանք հարկադրուած էին լսել անխօս, որովհետեւ եթէ խօսէին — մէկը պիտի վաղը սնանկանար, միւսը զրկուէր մէկ միլիոնի ժառանգութիւնից:

Թափելով իւր սրտի թոյնը, Մարկոսեանը սկսեց զամաց կամաց հանգստանալ և լռեց: Մերսիմեանի հլու

լուսթիւնը նրան մեղմացրեց, իսկ Նառիմեանի ներկայութիւնը ամաչացրեց:

— Գնա աղբէր, — ասաց նա, վերջապէս, — ինչ որ Արշակն ուզում է, թող անի: Ես իմ իրաւունքները նրան եմ տուել: Եթէ փող կայ, թող տայ:

Նառիմեանը ոտքի կանգնեց:

— Բայց, — շտապեց աւելացնել Մարկոսեանը, — ինչպէս որ ասացի, Արշակ, այնպէս արա, թէ չէ — դու գիտես, ես պատասխանատու չեմ: Իէհ, ծառայութիւն...

Ընկերները նրան հրաժեշտ տուեցին:

Փողոց դուրս չեկած Մերսիմեանը գոչեց.

— Այ տանջանք, այ խայտառակութիւն, ամբողջ մարմինս քրտինքի մէջ է...

— Վնաս չունի, պէտք է կարծել, որ առաջին անգամը չես այդ տեսակ բաղանիք ընդունում: Էհ, եղբայր, չը պիտի մանրակրկիտ լինել: Նա ունէր իրաւունք:

— Գոնէ խնդիրս կատարուած է:

— Այդ է հետաքրքրականը: Այո, համարեա թէ կատարուած է...

— Այն ժամանակ թքել եմ այդ մարդու նախատինքների վրայ: Շնորհակալ եմ, բարեկամ, դու ինձ կործանումից ազատեցիր...

— Իե՛ռ ո՛չ, մի շտապիր:

Մերսիմեանը կանգ առաւ ցնցուելով մայրի վրայ և նայեց ընկերոջ երեսին, թէև մութը թոյլ չէր տալիս տեսնելու այդ երեսը:

— Ես կատարեցի իմ ընկերական պարտքը, — ասաց Նառիմեանը, ձեռը դնելով նրա ուսի վրայ, — այժմ հերթը քոնն է:

— Հրամայիր:

— Լսեցիր փեսայիդ վերջին խօսքը. «Ես պատասխանատու չեմ»:

— Այ: Այդ քնչ է նշանակում:

— Այդ նշանակում է, որ նա գրաւ է պահանջում:

— Գործարանս:— Արդէն գրաւումն է:

— Ոչ:

— Հողերս:— Համեցէք:

— Ոչ: Նա գրաւ է պահանջում իմ ապագայ կնոջ օժիտը:

— Այդ չեմ հասկանում:

— Լսիր, բարեկամ, փեսադ բաւական օրիժինալ մարդ է: Ես երկար խնդրեցի նրան քո մասին: Դրու- թիւնդ նկարագրեցի ամենատխուր գոյներով, բայց ա- պագագ ներկայացրի փալլուն գոյներով: Աւելացրի, պա- կասեցրի, մի խօսքով ստեցի որքան կարող էի: Ձեզաւ: Վերջը ստիպուած եղայ վշտացած ձեանալ— իբրև թէ եթէ դու սնանկանաս, ես էլ պիտի խայտառակուեմ: Այն ժամանակ կաղեց և ասաց, թէ այս անգամ էլ կօգնի քեզ, միայն իմ խաթրու և վերջին անգամ: Բայց որով- հետև վաճառական է, ուստի հասկանալով, որ քեզնից փող ստանալ չի կարող, գտաւ մի օրիժինալ գրաւ: Նա պայման դրեց, որ թէ նոր պարտքդ և թէ հները գրուին իմ ապագայ կնոջ ժառանգութեան հաշուին: Ի՞նչ կասես, բարեկամ, տարօրինակ է, չէ՞...

— Եւ դու ընդունեցիր այդ պայմանը:

— Ես քեզ նման ապերախտ ընկեր չեմ:

— Անշուշտ մի որոշ նպատակով: Ես քեզ ճանա- չում եմ:

— Բոլորովին ճիշդ է, սիրելիս, դու ինձ լաւ ես ճանաչում: Ծառայութեան փոխարէն— ծառայութիւն: Ես քեզ ազատեցի նեղ գրութիւնից, այժմ դու պիտի ազատես ինձ...

— Ասա, ինչ ուզում ես: Վաղուայ օրն ինձ համար այնքան սոսկալի է, որ պատրաստ եմ կատարել քո բո- լոր պայմանները:

— Իմ պայմանը քեզ յայտնի է: Գիտես արդէն ինչ

է հարկաւոր անել: Ասա խնդրեմ, ի՞նչպէս ես հաւանում եմ սիրուհուս, այսինքն նախկին սիրուհու: Ափսոս միթան մէջ լաւ չեմ տեսնում աչքերդ, նրանց մէջ կը կարդայի իմ հարցի պատասխանը: Բայց ոչինչ, ես արդէն գիտեմ ամեն բան: Համոզուած եմ, որ ոչ միայն չես վիրաւորուի, այլ և գուցէ... Իէ, սիրելիս, ինչու կ'օմեղիս խաղալ: Նստիր կառք և իսկոյն գնա նրա մօտ: Տուր նրան սիրտդ և բեր ինձ համար ազատութիւն: Սուս, ոչ մի խօսք: Ես այսօր ճաշից յետոյ ամեն բան իմացայ: Այո, այո, նա քեզ շատ է հաւանում: Ինձանից միայն երեխայի ապահովութիւնն է պահանջում: Ես խոստացել եմ: Մնում է քանակութիւնը որոշել: Ես սակարկութիւն չեմ սիրում: Յանձնում եմ քեզ այդ գործը: Շատ էլ ժլատ չը լինիս, բայց և ոչ առատաձեռն, չափաւոր... Համաձայն ես:

Մերսիմեանը ոչինչ չասաց:

— Լուսթիւնն այս դէպքում կատարեալ համաձայնութիւն է: Ի, կառապան, սպասիր: Դէհ, նստիր ու շտապիր: Ես քեզ կը սպասեմ կլուքում: Ծաշեցինք կուուով, կրնթրենք բարեկամաբար...

Նա գրկեց Մերսիմեանին ընկերաբար և մօտեցրեց կառքին:

— Շատ չուշանաս, — ասաց նա և հեռացաւ:

Մերսիմեանը նստեց կառք և աներևութացաւ դիշերային խաւարի մէջ:

Երկու ժամ դէս ու դէն պտտելով, սրա ու նրա հետ զրուցելով, Նառիմեանը, վերջապէս, յոգնեց և անցաւ սեղանատուն:

Հազիւ նա նստել էր սեղանի քով, երբ ներս մտաւ Մերսիմեանը աչքերը վառուած, դէմքը կարմրած: Նա գուարթ էր:

— Գիտես, — ասաց նա նստելով ընկերոջ դէմ ու դէմ, — դու շատ գարշելին ես:

— Մենք հաւատարիմ ընկերներ ենք:

Նրանք սկսեցին ընթրել:

ԵՐՐՎԱՆՁԱԿԷ